



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

մարտի 2020 թվականի № 1
ք.Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 2-Ի N238Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամների, աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամների համար սոցիալական ծրագրի իրականացման և միանվագ դրամական օգնության տրամադրման կարգը հաստատելու մասին» №238Լ որոշման 1-ին կետով հաստատված՝

1) կարգի 8-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) Աշխատակցի (վարկառուի կամ համավարկառուի)՝ բնակարանի (անհատական բնակելի տան) սեփականատեր (համասեփականատեր) հանդիսանալու դեպքում հիփոթեքային վարկի ամսական վճարի կամ նույն վարկի գումարի մասնակի մարումը».

2) կարգի 8-րդ կետի 5-րդ ենթակետից հանել «կամ պայմանագրային» բառերը,

3) կարգի 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Սոցիալական ծրագրով նախատեսված ծառայություններից օգտվելու համար Աշխատակիցը լրացնում և Ստորաբաժանում է ներկայացնում սույն կարգի N1 հավելվածով սահմանված ձևին համապատասխան հայտ (այսուհետ՝ հայտ)՝ կցելով սույն կարգի 8-րդ կետի՝

- 1) 1-ին և 4-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում՝ պայմանագրի պատճենը, ինչպես նաև ծախսը հիմնավորող հաշվարկային փաստաթուղթը (հարկային հաշիվ կամ ճշգրտող հարկային հաշիվ կամ հաշիվ-վավերագիր կամ ճշգրտող հաշիվ-վավերագիր) կամ կանխավճարի փոխանցման հաշիվը,
- 2) 2-րդ ենթակետով սահմանված դեպքում՝ բանկի կամ վարկային կազմակերպության կողմից վավերացված տեղեկատվություն՝ տվյալ պահին մարման ենթակա հիփոթեքային վարկի ընդհանուր գումարի (վարկի գումար և տոկոսագումար), վարկի տեսակի (եթե պայմանագրում վարկի տեսակը նշված չէ), պայմանագրի համարի և այն հաշվեհամարի վերաբերյալ, որին պետք է փոխանցվի նշված վարկի ամսական վճարը կամ նույն վարկի մասնակի մարման համար անհրաժեշտ գումարը, իսկ տվյալ պայմանագրով նախատեսված հիփոթեքային վարկի ամսական վճարի կամ նույն վարկի գումարի մասնակի մարումն առաջին անգամ սույն կարգի շրջանակում իրականացնելիս՝ նաև հիփոթեքային վարկի պայմանագրի պատճենը,

3) 3-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված դեպքերում՝ ծախսը հիմնավորող հաշվարկային փաստաթուղթը (հարկային հաշիվ կամ ճշգրտող հարկային հաշիվ կամ հաշիվ-վավերագիր կամ ճշգրտող հաշիվ-վավերագիր) կամ կանխավճարի փոխանցման հաշիվը,

4) 7-րդ ենթակետով սահմանված դեպքում՝ վարկը (ապառիկը) տրամադրած բանկի կողմից վավերացված տեղեկատվություն, որում պետք է նշված լինեն ապրանքի առուվաճառքը հիմնավորող պայմանագրի համարը, տվյալ պահին մարման ենթակա վարկի (մայր գումար և տոկոսագումար) գումարի չափը և հաշվեհամարը, որին պետք է փոխանցվի մարման ենթակա վարկի (ապառիկի) գումարը, իսկ նշված պայմանագրով վարկի (ապառիկի) գումարի մարումն առաջին անգամ սույն կարգի շրջանակում իրականացնելիս՝ նաև տվյալ պայմանագրի պատճենը:».

4) Կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1.-րդ և 12.2-րդ կետերով.

«12.1 Կարգի 8-րդ կետի 2-րդ և 7-րդ ենթակետերով սահմանված դեպքերում՝ տվյալ բյուջետային տարում առաջին անգամ համապատասխան ծառայությունից օգտվելիս, բանկից տեղեկատվություն կարող է ներկայացվել

միայն առաջին անգամ հայտ ներկայացնելիս, իսկ հաջորդ վճարումների համար հարկավոր է ներկայացնել միայն հայտ, բայց տեղեկատվությամբ ներկայացված գումարի (մայր գումար գումարած տոկոսագումար) մնացորդից ոչ ավելի գումարի չափով:

12.2 Սույն կարգով նախատեսված ծառայություններից Աշխատակցի ընտանիքի անդամի օգտվելու դեպքում՝ Աշխատակիցը ներկայացնում է նաև իր ընտանիքի անդամի՝ համապատասխան կարգավիճակը հավաստող փաստաթուղթ:».

5) Կարգի 19-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետում «150000» թիվը փոխարինել «200000» թվով,

բ. 2-րդ ենթակետում «130000» թիվը փոխարինել «200000» թվով, «170000» թիվը՝ «250000» թվով, «250000» թիվը՝ «300000» թվով,

գ. 3-րդ ենթակետից հանել «մինչև» բառը:

6) Կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 29-րդ կետով.

«29. Աշխատակիցը պատասխանատվություն է կրում սույն կարգով նախատեսված ծրագրից օգտվելու շրջանակում իր կողմից ներկայացված տեղեկատվության հավաստիության համար:»:

7) Կարգի №1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ